ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

«Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծի 2-րդ կետով նախատեսվում է հետևյալը. «Թույլատրել համայնքի ղեկավարին 2024թ. բյուջեի կատարման ընթացքում գործառնական և տնտեսագիտական դասակարգումների մեջ վերաբաշխումները կատարել 50%-ի չափով:»:

Այս առումով հարկ է նկատի ունենալ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ Համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները: Ուստի ելնելով վերոգրյալից՝ նախագծում անհրաժեշտ է սահմանել նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջներից՝ բխող սահմանափակումների վերաբերյալ դրույթներ:

2.Նախագծի 4-րդ կետի համաձայն՝ Սույն որոշումն ***ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից***: Ուստի նախագծի 4-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել «2023թ.» բառերը փոխարինելով «2024 թվականի» բառերով:

Արդարադատության
Նախարարություն

3. Նկատի ունենալով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի պահանջները՝ անհրաժեշտ է ներկայացնել նաև բյուջետային ուղերձը:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ

12/26/2023

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ